

**ՇԵՔՍՊԻՐԻ 66-ՐԴ ՍՈՂԵՏԸ ԵՎ ՆՐԱ
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԴԱՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Համեսի «Ժամանակն իր շավդից գուրս է սայթաքելք արտահայտությունը, որի մի դրսնորումն էլ հայտնի «լինել թե լինենա է և որը շափազանց բնորոշ է ամրող «Համեսա» ողբերգության և գուցեց ընդհանրապես շեխսպիրյան ողբերգությունների համար, արտահայտում է հեղինակի շհաշտվելը, այսպես կոչված, «Ժամանակի» հետ:

Ի՞արկե, այդ դժոհումը, «Ժամանակի» հետ շհաշտվելը ամեն մի հեղինակի ստեղծագործության մեջ յուրովի գունավորմամբ է դրսնորդում, բայց էտիպունը նույնն է, այն, ինչ, թերեւս, ամենից ավելի դասական ձևով արտահայտվել է «Համեսա»-ում:

Ուրեմն իրականում «Ժամանակ»-ը սոսկ մի խորհրդանիշ է այսպիսի դեպքերում, այլապես ինչպես՝ որ բոլոր ժամանակների մեծ հեղինակները շեն հաշտվում իրենց ժամանակի հետ, այսինքն՝ այդ շհաշտվելը վերաբերում է բոլոր ժամանակներին, աշխարհին, մարդկային կյանքին ընդհանրապես:

Տարբեր հեղինակներ դժոհելով «աշխարհից» տարբեր եղրակացությունների են հանգել: Մեկը սրոշել է պայքարել, մյուսը միսիթարանք է գտել մարդկանց ներելու, «վատը լավ տեսնելու» մեջ, երրորդը փախել է մարդկությունից, չորրորդը մտածել է իր կյանքին վերջ տալու կամ, համենայն դեպս, երազել է մեռնելու մասին:

Ահա այս վերջին եղրակացությունն է, որ տեղ է գտել Դանեմարքի արքայազնի մտորումներում, որոնք անպայման նաև ինչ-որ շափով մեծ դրամատորգի մտորումներն են, թանի որ շեշտված արտահայտվել են նրա բնարական հոյակապ շարքում՝ սոնետների մեջ:

Այն հարցին, թե Շեքսպիրի բազմաթիվ հերոսներից ո՞րը գրող լինելու դեպքում կզրեր Շեքսպիրի նման, պատասխանել են՝ Համլետը կամ Հոռացիոն։ Ըստ երեսվթին, միայն Համլետը բավական է այս պատասխանում։ Եվ չի կարելի շհամաձայնել այն կարծիքին, ըստ որի Շեքսպիրի ամենաշեքսպիրյան երկը «Համլետն» է։

«Փամանակն իր շավզից գուրս է այլթաքել» բնորոշող բացականչության փակագծերը բացվում են «Լինել թե լինել» մենախոսության մեջ, որը նաև ինչ-որ շափով բյուրեղացած է «Համլետի» հիմնական մտահղացումը։

Վաղուց է նկատված այն նմանությունը, որ առկա է այդ, թերևս, ամենահանրահայտ շեքսպիրյան մենախոսության և Շեքսպիրի 66-րդ սոնետի միջև։ Ի դեպ, ասենք նաև, որ ըստ հաշվումների¹ Շեքսպիրի սոնետներում արտահայտված տրամադրություններն ու խոհերը ամենից հաճախ հիշեցնում են «Համլետը»։

Այստեղ հիշենք նաև Շեքսպիրի սոնետների մի կարևոր առանձնահատկությունը՝ այդ սոնետները շատ նման են մենախոսությունների։ Այդ հատկությունը լավ է երկում 66-րդ սոնետի միջ։ Մյուս կողմից ուշագրավ է, որ սոնետի «կաշկանդիչ» ձեզ (14 տող՝ 3 քառատող, յուրաքանչյուր տողերի մեջընդմեջ հանգերով և 1 հանգավոր երկողով)² չի խանգարել Շեքսպիրին, որ իր մի քանի թատերական երկերի մեջ (օրինակ՝ «Ռոմեո և Ջուլիետ»-ում, «Սիրո ապարդյուն ջանքեր»-ում) սոնետը օգտագործի իրեն երկախոսության և մենախոսության ձև։

Շեքսպիրյան բոլոր սոնետներից գուցե ամենից ավելի դրամատիկականը 66-րդն է, որ կարող է ընկալվել և իրեն մենախոսություն, գուցե ավելի, իբրև երկախոսության մի հատված՝ խոսք ուղղված խոսակցին։

Tir'd with all these, for restful death I cry,—
As, to behold desert a beggar born,
And needy nothing trimm'd in jollity,
And purest faith unhappily forsworn,
And gilded honour shamefully misplac'd,
And maiden virtue rudely strumpeted,
And right perfection wrongfully disgrac'd,
And strength by limping sway disabled,
And art made tongue-tied by authority,
And folly (doctor-like) controlling skill,

And simple truth miscall'd simplicity,
 And captive good attending captain ill.
 Tir'd with all these, from these would I be gone,
 Save that, do dle, I leave my love alone.

Տողացի թարգմանությունն է.

- 1 Հոգնած այս ամենից ևս անդորրաբեր մահվան (մահվան անդորրն) եմ կանչում:
 - 2 Տեսնելով՝ արժանավորությունը (զարձած) մուրացկան ի ծնե,
 - 3 Եվ զատարկ ոչնչությունը խինդի մեջ բարգավաճելիս,
 - 4 Եվ ամենամաքուր հավատը տարաբախառորեն (անտեղի) խարված (մերժված),
 - 5 Եվ ոսկեզօծված պատիվը անամոթարար արվազ,
 - 6 Եվ կուսական առաքինությունը զաժանորեն պղծված,
 - 7 Եվ իսկական կատարելությունը անարդար շվարծատրված (չզնահատված),
 - 8 Եվ ուժը, կաղ իշխանությունից ճնշված,
 - 9 Եվ արվեստը լոելու զատապարտված իշխանության (բռնության) կողմից,
 - 10 Եվ հիմարությունը իրեն խրատառու՝ հմտությունը (գիտելիքները) քննելիս,
 - 11 Եվ պարզ ճշմարիտը բթամտություն (տիսմարություն) անվանված,
 - 12 Եվ սարկացված բարին, հաղթանակած շարին ծառայելիս.
 - 13 Հոգնած այս ամենից՝ ևս կուպեի հեռանալ (այդ ամենից),
 - 14 Եթե մեռնելով ստիպված շինեի թողնել իմ սերը (սիրելիիս) միայնակ:
- Ասենք միանգամից, որ բերվածը մենք անվանեցինք «տողացի թարգմանություն», որի տակ երեսն ենթադրվում է նաև «բառացի թարգմանություն» իմաստը: Իրականում այդպիս չէ: Տողացի թարգմանություն ասելով պետք է հասկանալ միայն տողի դիմաց տող թարգմանելը, իսկ «բառացի թարգմանություն» տերմինից, ըստ երեսութին, պետք է հրաժարվել կամ այն պայմանականորեն հասկանալ, քանի որ այդպիսի թարգմանություն իրականում լինել չի կարող: Զափածոն արձակ թարգմանել, գեռ չի նշանակում բառացի կամ բառացիորեն ճիշտ թարգմանել: Եվ սա մեծ շափով է վերաբերում Շեքսպիրի սոնետներին, մանավանդ 66-րդ սոնետի թարգմանությանը: Բառերի բազմիմաստություն,

նրբիմասառություն, արտաքին հանդարատություն ու պարզություն և դրանց տակ կամ դրանց մեջ թարնված քնքուշ, բայց հաճախ և այլուղ հույզ, որին խառնված է լինում խոհը, մտախոհությունը, — այդպիսիք են շեքսպիրյան սոնետների զգալի մասի, այդ թվում 66-րդի կարեսր առանձ-նահատակությունները:

Վերը բերված տողացի թարգմանության մեջ այդ ամենի ստվերն է մնացել միայն, բայց այն անհրաժեշտ է մեր բնությունը շարունակելու համար (66-րդ սոնետի կառուցվածքը, եթե կարելի է ասել, կմախքը ներ-կայացնելու համար այն ընթերցողին, որին բնագրի խոսքն անմատչե-մ է):

Եվ այսպես, սոնետի առաջին տողում բանաստեղծը մահվան անդորր է երազում, հոգնած այս ամենից: Թե ինչ է այդ ամենը, բացահայտվում է հաջորդ 12 տողերում, նախավերջին տողում փոքր-ինչ այլ կերպ կրկն-վում է 1-ին տողի բովանդակությունը (հոգնած այս ամենից ուղում է սեռնել), իսկ վերջին տողը անսպասելիորեն ոչ միայն ամբողջացնում է բոլոր 13 տողերում ասվածը, այլև բացահայտում է մի նոր աշխարհ, բանաստեղծի իսկական, մինչ այդ չնկատված էությունը և խորությունը՝ նրան աշխարհում պահում է միայն այն, որ մտահոգված է մեկ ուրիշի, իր սիրելի անձնավորության հետագա ճակատագրով (ի՞նչ պետք է անի աշխարհում սիրելի էակը միայնակ, առանց իրեն):

Տարածված տեսակետ կա այն մասին, որ Շեքսպիրի սոնետների առաջին 126-ը նվիրված են բանաստեղծի ընկերոջը (որոշ ուսումնասիրողների կարծիքով դա կոմս Սաուտհեմփորտն է); 127—152-ը՝ Թիա-դեմ տիկնոջը, վերջին երկուսը անգլիական թատ առողջավայրի բուժիչ աղբյուրներին: Ուրեմն ըստ այս տեսակետի 66-րդ սոնետի վերջին տո-ղում հիշված, «սիրելին» (կամ «սերը») բանաստեղծի ընկերն է (բարե-կամը): Սակայն առաջին 126 սոնետներին վերաբերող այս տեսակետը, որ սկիզբ է առել XVIII դարի վերջին, վիճարկում են շատերը: Գլխավո-րապես կասկածի տեղիք է տալիս առաջին 126 սոնետների մի մասը: Այդ այն սոնետներն են, որոնք, ինչ հիմնավորում էլ բերվի, միևնույնն է, հազիվ թե մի տղամարդու նվիրված լինեն: Դժվարությունն առաջա-նում է հետեւյալ պատճառով. XVI—XVII դարերի բանաստեղծության մեջ, իրոք, ընդունված էր, որ մի տղամարդ չերմ սիրո ձռներ հղեր մի այլ տղամարդու՝ նրա գեղեցիության, նույնիսկ քնքության գովարեանում-ներով, և քանի որ անգլերնում ածականները քերականական սեռի կարգ և վերջավորություններ չունեն, իսկ Շեքսպիրի առաջին 126 սոնետներում աւղակի խոսք չկա, թե բանաստեղծի սիրո առարկան կին է թե տղա-

մարդ, ուստի և դժվար է առեղծվածին բանասիրական ստույգ լուծում տալ:

Նույնիսկ սուս երկու ականավոր շեքսպիրակների՝ Մ. Մորոզովի և Ա. Անդկուտի միջև համաձայնություն չկա այս հարցում: Ա. Անդկուտը որեւէ կասկած անդամ չունի այն մասին, որ ասացին 126 սոնեար վերաբերում են տղամարդու, զիանականը միայն բացատրում ու հիմնավորում է այդ հանդամանքը³, մինչդեռ Մ. Մորոզովը կասկածի է ենթարկում այդ տեսակեար՝ գրելով. «Եվ ակամայից մարդ հակվում է գեպի այն ենթադրությունը, որ Շեքսպիրի սոնեաները մեկ ամբողջական սյուժեային շարք չեն կազմում, որ Շեքսպիրը նրանցում խոսում է ոչ թե երկու, այլ շատ անձանց մասին, որ սոնեաները արտացոլում են մեծ դրամատուրգի և բանաստեղծի՝ մեկ այնքան բիշ ծանոթ կենսագրության ամենաարքեր փաստերը, քանի որ սոնեաները գրվել են տարբեր ժամանակներում, կյանքի տարբեր հանդամանքներում: Օրինակ, որտեղից է հայտնի, որ սոնեաների մեծապույն մասը վերաբերում է մեկ ընկերոջ (բարեկամի): Ինչո՞ւ չենթադրել, որ այդ սոնեաներից շատերի մեջ խոսուք վերաբերում է սիրելի կողը»⁴:

Մենք չենք փորձում խորանալ այս հարցի մեջ, մանավանդ որ տվյալ դեպքում 66-րդ սոնեաի ամփոփիշ վերջնատողի ուժը, էությունը չի կարող փոխվել այն բանից, թե «իմ սերը» կամ «սիրելին» կի՞ն է, թե՝ տղամարդ: Ով էլ այն լինի, էությունը մնում է նույնը՝ բանաստեղծը կամ քնարական հերոսը չի աղաւալում (մահով) կյանքի անտանելի դառնություններից միայն այն պատճառով, որ չի ուզում այդ դառնությունների մեջ սիրելի անձին մենակ թողնել:

Կյանքի խոցող անարդարությունների, աշխարհից հոգնած կամ դառնացած լինելու և մահվան մասին խոռը կա շեքսպիրյան մի շարք սոնեաներում (44, 60, 64, 68, 121 և այլն), որոնք բոլորն էլ ինչ-որ չափով հիշեցնում են «Համլետը»: Ի գեպ, նման արամագրություններ կարելի է գտնել նաև «Էլուկրեցիա» պոեմում (Լուկրեցիայի գանգատը) և գուցե «Թիմոն Աթենացու» մեջ: Սակայն ակնառու է, որ ամենից ավելի 66-րդ սոնեան է հիշեցնում «Համլետի» արամագրությունները և մասնավորապես «կինել թե լինել» մենախոսությունը: Ուստի և հասկանալի է, թե ինչու այդ մենախոսության և 66-րդի աղերսի մասին բավական շատ է խոսվել, և շատերն են խոսել:

Նույնիսկ հայ իրականության մեջ այդ հարցը արծարծվել է: Օրինակ, Հ. Մասեհյանը «Օթելոյի» իր թարգմանության 1922 թ. հրատարա-

կության մեջ (Վիեննա) բերելով սոնետի իր թարգմանությունը ընդգծում է նրա և Համլետի մենախոսության ընդհանրությունը: Հ. Հովհաննիսյանը Շեքսպիրին նվիրած իր դասախոսությունների մեջ թարգմանաբար բերելով 66-րդ սոնետի սկզբի 12 տողը՝ ասում է. «Համեմատեցեք այս կտորը «Համլետի» հոլակավոր «Էլինել թե Ալինել» մենախոսության հետ և կտեսնեք, որ ոչ միայն երկուսն էլ միմնույն զգացմունքների ու մտքերի արտահայտություն են, — մենախոսությունը սոնետի զարգացումն է, նորա կատարելագործված մշակությունը»⁵: Այս կարգի կարծիքներ շատերն են հայտնել:

Անշուշտ, սոնետի աղերսը համլետյան «Էլինել թե Ալինել»-ու հետ մեծ է, բայց զարմանալի է, միշտ այդ աղերսի մասին են խոսում, կարծես շցանկանալով տեսնել նաև լուրջ տարբերությունները:

Նախ նմանության մասին: Երկու դեպքում էլ հիմնեղանակը մեռնելու ցանկությունն է և երկու դեպքում էլ այդ ցանկությունն առաջանում է կյանքում տիրող ահավոր և անուղղելի անարդարություններից ազատվելու մղողությունը: Երկու դեպքում էլ այդ անարդարությունների բնույթը նույնն է, թեև բառացիորեն նրանք նույնը չեն, օրինակ, մենախոսության մեջ եղած «...այն հարվածներին, որ համբերատար արժանավորը ստանում է միշտ անարժաններից» միտքը ուժեղ է նաև սոնետում («Եվ հիմարությունը իբրև խրատատու՝ հմտությունը քննելիս», «Եվ ստրկացված բարին՝ հաղթանակած շարին ծառայելիս» և այլն):

Եվ այսքանով էլ ավարտվում են նմանությունները: Այժմ տարբերությունների մասին: 1. Մենախոսության մեջ անարդարությունների կամ «աշխարհից» այնքան նախատինքների⁷ և «մտրակների» թվարկումը սկսվում է «թե ոչ, ո՞վ արդյոք կուզեր հանդուրժելց»⁸ տողով, այն բանից հետո, երբ Համլետն արդեն բավական լուրջ ու ծավալով ոչ փոքր խորհրդադություն էր արել մահվան մասին: «Համլետի» անգլերեն ամենատարածված հրատարակությունների մեջ այդ խորհրդածությունը զբաղեցնում է 15 տող: Անարդարությունների թվարկումը մենախոսության մեջ համեմատարար փոքր տեղ է գրավում՝ բնագրում 3 տող⁹ և կազմում է ամբողջ մենախոսության շուրջ 1/11-ը: Այս 3 տողում համառոտակի թվարկվում են 6 անարդարություն, որից հետո շարունակվում է խորհրդածությունը մահվան մասին մինչև վերջ 15 տողում, մինչև 0ֆելիային հասցեագրված նախադասությունը (2 տող): Այսինքն բնագրային 33 տողից 3-ում են թվարկվում աշխարհի «նախատինքները» (ծաղրանքը) և մտրակները, մյուս 30 տողերը նվիրված են մահվան մասին կատարվող խորհրդածություններին:

Բայց ոչ միայն այս հաշվամբները, այլ մենախոսության ամրող բովանդակությունն էլ ասում է, որ այնտեղ կարեորդ, հիմնականը խորհրդածությունն է մահվան մասին, իսկ կյանքի անարդարությունների թրվարկումը երկրորդական է, թռացիկ, ասված սուկ բացարձելու համար այն բանի (մահվան) ցանկալիությունը, որին նվիրված է մենախոսությունը ի՞նչ է մահը, ահա մենախոսության գլխավոր հարցը, որի հատակում են մյուս հարցերը:

«Մենք՝ ննջեմ՝... զուցե երազել, ԱՇ, ցավի այգանդ է, քանզի այդ մահվան բնի ժամանակ ի՞նչ կերպ երազներ պիտի գան գուցե՞ն երը այս մահացու կապանքը մեզնից թոթափած լինենք» և այլն Սա մարդկային հավերժական կասկածն է մահվան սահմանից այն կողմում եղածի կամ չեղածի մասին՝ «Այս անհայտ երկրի, որի սահմանից ոչ մի ուղեոր չի վերապանում»: Համեմատի այս կասկածը կապում են XVII դարի գաղափարների հետ (Մ. Մոնտենի «Փորձերի» հետ և այլն), բայց այն շատ ավելի հին է («Ծիշենք նրա հստակ, զասական արտահայտությունը Սոկրատի «Պաշտպանության» մեջ):

66-րդ սոնետում անարդարությունների («այս ամենի») թվարկումն սկսվում է 2-րդ տողից, զրադեցնում է 11 տող (14 տողից) և թվարկվում է 11 անարդարություն, այսինքն՝ սոնետի մեծ մասը նվիրված է այդ թվարկմանը: Եվ այդ թվարկումն էլ ավելի հանգամանալից է, խորաթափանց, քան մենախոսության մեջ: Բովանդակությունից պարզ է, որ սոնետում այդ թվարկումը շատ ավելի էական բնույթ ունի, քան մենախոսության մեջ: Նրա միջոցով է արտահայտվում բանաստեղծի հոգեկան խոսքը, կյանքից լիովին հոգնած լինելը և կյանքում «այս ամենին» ստիպված դիմանալու ծանրությունը: Սոնետում հակառակ մենախոսության, մահվան մասին որևէ խորհրդածություն, մտարում չկա, միայն առաջին տողում ասվում է՝ «անդորրաբեր մահ», իսկ, նախավերջում մահը պարզապես նույնացվում է կյանքից հեռանալուն:

2. Մյուս կարենոր տարրերությունն այն է, որ մենախոսության մեջ ուղղակիորեն խոսվում է ինքնասպանության մասին, «թե՝ զենք վերցնել ցավ ու վշտերի մի ծովի ընդդեմ»¹⁰, «Այնինչ կաբող էր մարդ իր հաշիվը իր ձեռքով փակել մի մերկ դաշույնով»¹¹:

Սոնետում ինքնասպանության մասին որևէ ակնարկ չկա: Ճիշտ է, կտա այն միտքը, որ «Կթե մեռնելով ստիպված չինեի թողնել իմ սերը

միայնակ», որից կարելի է Անթադրել, որ եթե «ստիպված շիներ...», ինքնասպան կլիներ, բայց դա սուկ սոնետի բանաստեղծական բովանդակությունից հեռացող տրամարանական հնթադրություն է: Ասում ենք «բանաստեղծական» բովանդակություն, քանի որ ԵԵ-րդ սոնետի քնարական տրամադրությունն այնքան ամբողջական է, նաև կլանող, որ մաս երազող բանաստեղծի (կամ քնարական հերոսի) մահանալու ձեր հարցը երկրորդական է դառնում, անկարևոր: Այլ խոսքով, սոնետը հեռու է այն որոշակիությունից («ծանր բեռ-ից ազատվել ինքնասպանությամբ»), որը մի քնարական բանաստեղծության մեջ քիչ բանաստեղծական կհնչեր:

3. Մյուս տարբերությունը բխում է նախորդ երկուսից. մենախոսության մեջ «լինել թե լինել»-ը պատճառ է մի կողմից «բախտի պարսատիկներից» և «սլաքներից», «այսինքն բերից», «աշխարհի այնքան նախատինքներից», «ցավ ու վշտերի ծովից» և կյանքի ուղղակիորեն նշգած անարդարություններից աղատվելու ոժեղ ձգտումը, և դրա հետևանքով սեփական կյանքին վերջ տալու ցանկությունը, մյուս կողմից կասկած՝ արդյոք մահով կազատվի՝ այդ ամենից (թե՝ կսավառնի «դեպի նոր դավեր, որոնց անգետ ենք»), և դրա հետևանքով վճիռ չկայացնելը («խոհեմությունն, այսպես, ամենքիս վախկոտ է դարձնում»):

Սոնետի մեջ «լինել թե լինել»-ու հանգամանքը ավելի թույլ է արտահայտված, ու թեև «ըլինել»-ուն ձգտելու պատճառը նույն է, ինչ «Համեւետի» մեջ, բայց «լինել»-ու պատճառը բոլորովին այլ է՝ ոչ թե մահվան էությունից, այնկողմայինից անտեղյակ լինելն ու դրանից բխող «խոհեմությունը», նաև վախը, այլ սիրելի մարդու նկատմամբ սիրո և պարտքի մեծ զգացումը, հոգացողությունը նրա մասին:

Եվ այսպես, «Համեւետում» «լինել թե լինել»-ը չի լուծվում հօգուտ «ըլինել»-ու, այնկողմայինի նկատմամբ հերոսի ունեցած կասկածի և վախի պատճառով, այսինքն՝ ի վերջո հերոսը խնայում է իրեն (իդուր չէ Համեւետի անկեղծ ինքնախարազանումը այդ վախի համար), ԵԵ-րդ սոնետում «ըլինել» չի հաղթում շատ ավելի վեհ, մարդկայնորեն բարձր զգացմունքի պատճառով, որ հավասար է ինքնազոհաբերման: Այսինքն՝ մի դեպքում ունենք իր ես-ը խնայելուց, նոր շարշարանքի մեջ ընկնելու վախից խոհեմություն, այսինքն՝ եսասիրության նման մի բան, մյուս դեպքում լիակատար անձնուրացություն, այլասիրություն, այսինքն՝ մարդասիրություն: Հակադիր շարժառիթներ:

Կարելի՝ է արդյոք ԵԵ-րդ սոնետի և «լինել թե լինել»-ու բովանդակություններից եղրակացություն անել այն հարցի մասին, թե որն է

ավելի վազ գրվել՝ սոնե՞մը, թէ՞ «Համլետը»։ Դժվար է։ Ըստ բնդունված կարծիքի, «Համլետը» գրվել է Շեքսպիրի գրական գործունեության 2-րդ շրջանում, որը բնկած է մոտավորապես 1595—1602 թթ. միջն¹², իսկ ըստ ուսումնասիրությունների գրվել է 1601—1602 թթ.¹³ միջն, ըստ այլ կարծիքների 1602—1603 թթ., նաև՝ 1600—1601 թթ.¹⁴, որ այժմ ամենաճիշտ թվականն է հայտնվում։

Շեքսպիրի սոնետների մասին առաջին հիշատակությունը կատարվել է 1598 թ. (Յ. Մերսիսի «Պալասի գանձարան» գրքում)¹⁵, իսկ սոնետներից երկուսը (138 և 144) տպագրել է Ուլիլամ Զադարյան 1599 թվականին¹⁶։

Բոլոր այժմ հայտնի 154 սոնետները լուսու են բնձաբվել Թոմաս Թորպի կողմից 1609 թվականի մայիսին։ Գուցեն և ճիշտ է, որ Շեքսպիրը սոնետներ սկսել է գրել 1590-ական թվականների սկզբում¹⁷, բայց արդյո՞ք գրանք եղել են այժմ մեղ հայտնի սոնետները կամ նրանցից մի քանիսը, հետազոտողները գծվարանում են ասել ենթադրություն կա, որ սոնետները գրվել են 1592—1598 թթ.¹⁸, նաև մինչև 1599 թվականը, բայց երբեմն վիճարկում են ալդ՝ հնարավոր համարելով, որ սոնետների մի մասը կարող է գրված լինել նաև XVII դարի սկզբներին, մինչդեռ ճիշտն այն է, որ այդ հարցի վերաբերյալ կան բազմաթիվ տարակարծություններ, և ոչինչ որոշակի ասել հնարավոր չէ¹⁹։

Մյուս կողմից, հայտնի չէ սոնետների գրության ժամանակագրական հաջորդականությունը։ Ուրեմն բանասիրական միջոցներով գծվար է, թերեւ, անհնար որոշել, թե երբ է գրվել 66-րդ սոնետը, բնավ բացառված չէ, որ «Համլետը» և 66-րդը գրված լինեն միևնույն ժամանակ։ Ենթադրություններ կան, որ 66-րդը գրվել է «Համլետ»-ից առաջ²⁰, թեև նման ենթադրություն անողներից մեկը՝ Ա. Անիկստը կարծես թե ենթադրում է նաև, որ 66-րդը ամենից ուշ գրված սոնետներից մեկն է²¹։ Մենք մեղ թույլ ենք տալիս ենթադրելու, որ, այնուամենայնիվ, 66-րդ սոնետի գրությունը հաջորդել է Համլետի «Լինել թե լինել» մենախոսության գրությանը, բանի որ թվում է, որ սոնետում հեղինակային մտահղացումը ավելի բյուրեղացած է, «մշակված», որին կարող էր նպաստել նախորդած «փորձը»։ Թվում է, որ սոնետի ողբերգական «ներքինն» էլ ավելի ուժեղ է, հակադիր կողմերի բահումն ավելի հուզիլ և բուն ողբերգության հիմքը մարդկայնորեն շատ վսեմ։ Իզուր չէ, որ այս սոնետը Ա. Մորոզովի կարծիքով «կարօնի է որպես բնարան դնել Շեքսպիրի մեծ ողբերգությունների հակատին»²²։

ԵԵ-բդը տարբեր լեզուներով ամենից ավելի շատ թարգմանված սունետներից է: Մի շարք լեզուներով նրա թարգմանությունները վաղուց անցել են տասից: Եվ չնայած դրան ուսումնասիրողները գտնում են, որ հաջող թարգմանություններ քիչ կան: Օրինակ, ուսուերեն թարգմանությունները քննող հեղինակներից մեկը (Ա. Ֆրենկելը) համեմատելով այդ լեզվով եղած թարգմանություններից ութիւն²³, որպես ամենահաջողվածներ ընտրում է երկուսը՝ Բ. Պաստերնակինը և Ա. Մարշակինը, բայց ի վերջո վերջին և վճռական երկտողի թարգմանության գործում լավագույնը համարելով Պաստերնակի լուծումը, ըստ էության միայն այդ թարգմանությունն է համարում իրոք հաշողված: Ավելի կարական է դնում հարցը մի ուրիշ հետազոտող (Ա. Յակոբսոնը)²⁴, որ Մարշակի թարգմանությունը պարզապես անհաջող է համարում, ուրեմն և միակ հաշողվածը համարելով Պաստերնակինը: Այդպիսով, ԵԵ-բդի ուսուերեն բազմաթիվ թարգմանություններից միայն մեկն է ընտրվում իրրե հաշողված:

Հայերեն այս սոնեալ թարգմանվել է մի քանի անգամ, մեզ հայտնի են 6-ը, որոնցից 5-ը տպագրված են: Դրանք են՝

1. Հովհաննես Հովհաննիսյանինը. թարգմանված է միայն 12 տողը, հավանաբար 1905 թ.²⁵ կամ դրանից մի քանի տարի հետո, տպագրված է քանաստեղծի երկերի ժողովածուի Յ-րդ հատորում (1965, էջ 474—475):

2. Հովհաննես Մասեհյանինը՝ տպագրված է «Օթելոյի» 1922 թ. վիճանական հրատարակության մեջ (նախարան):

3. Խաչիկ Դաշտենցինը՝ տպագրված է Հ. Մամիկոնյանի «Արտասահմանյան գրականության պատմություն» ձեռնարկում (Երևան, 1961, էջ 675—676):

4. Դավիթ Դավթյանի և Հովհաննես Քելեշյանի թարգմանությունը. Շեքսպիրի «Սոնեաներ» գրքում (Երևան, 1961, էջ 82):

5. Հակոբ Անտոնյանինը. տպագրված է «Պայքար» եռամսյա հանդեսում (Բոստոն, 1964, № 1, էջ 39):

Կա նաև Հ. Թումանյանին վերագրվող տողացի թարգմանությունը ուսուերենից, որ մնում է ձեռագիր²⁶:

Հայերեն թարգմանությունների մեջ, ինչպես տեսնում ենք, ընտրության ասպարեզը ավելի փոքր է, մանավանդ եթե հաշվի առնենք, որ Հովհաննիսյանի թարգմանությունը թերի է, իսկ Թումանյանին վերագրվողը՝ տողացի:

Տեսնենք, թե եղած թարգմանություններից որը ինչ արժանիք ունի և ինչ թերություն:

Ինչպես միշտ, ներկա գեղքում էլ լավ թարգմանության արժանիքը այս կամ այն բառը բառարանացին ճշտությամբ հայերեն բառով փոխարինելը չէ և ոչ էլ բառերի, նախադասությունների ու տողերի համակարգը ճշադրեն պահելը: Էալ թարգմանությունը այս գեղքում շերսափերյան արամագրությունը հայերենով հնարավորին շափ ճիշտ արտահայտեն է, հայերեն 66-րդ սոնեա ստեղծելը: Անշուշտ, այսպիսի գեղքում պահանջվում է բանաստեղծական վարպետության, Ենթապիրին ճիշտ ըմբռնելու և ողբերգությունը վերապրել կարողանալու միասնություն, որը դժվար է գտնել:

Ճիշենք, որ այս սոնեաը կատարողական տեսակետից ասանձնահատուկ է նրանով, որ ազատ է սոնեաներից մի բանիոին հատուկ էլեֆոնիստական պերճությունից ու զրգարանություններից, այն զերծ է նաև խիստ բանաստեղծական, զգացական, շեշտված երանդ ունեցող բառերից ու արտահայտություններից: Զիան վաս պատկերներ, չկան նաև սոնեաներից մի բանիսում հանդիպող ժողովրդականական բառեր և արտահայտություններ, զերծ է նաև զմվար թարգմանելի դարձվածներից: Սոնեաւմ իշխում է ժամանակի, եթե կարելի է տաել, ամենասուզորական գրական լիդոն: Հանդերք պարզ են, հասարակ, հատուկ անդիթական սոնեան: Քառյակների մեջ՝ ասած, վերջին երկտողում առ:

Սոնեաը կասուցված է Հոնետորական հնարաների հիման վրա: Ամբողջ բանաստեղծությունը մի նախադասություն է, ընդ որում, կյանքի անհարիստությունները և անարգարարությունները («այս ամենը») թվարկող 11 տողերը 2-րդ տողի սկզբում ասված տեսնելով (to behold) դերքայի լրացումներն են, ուղիղ խնդիրները («տեսնելով արժանավորությունը՝ մուրացկան ի ծնե և դատարկ ոչնչությունը խինդի մեջ բարգավաճելիս և ամենամարուր հավատը տարարախտարքն խարված» և այլն), ընդ որում առաջին անարգարությունից Հետո մյուս 10-ից յուրաքանչյուրի սկզբում զրված է եղ (And) Հոնետորական շաղկապը: Յուրաքանչյուր անարգարությունը բացահայտվում է Հակաթեղերի կամ Հակադրության միջոցով՝ «արժանավորությունը» (զարձած) մուրացկան», «դատարկ ոչնչությունը խինդի մեջ բարգավաճելիս», «ամենամարուր հավատը տարարախտարքն (անտեղի) խարված», «կուսական առաքինությունը զաժանորեն պղծված» և այլն:

Ահա նրբորեն բանաստեղծականացված Հոնետորական այս հնարանը բրն է հնարավորություն առվել շափականց սեղմ, բայց և շափականց ներգործուն զարձնել սոնեաը: Հակաթեղերը՝ շեշտված և-երով լարված բա-

խոսմներով լի խոսք են ստեղծում՝ արտահայտելով բանաստեղծի խոր հուզումը, հոգեկան մեծ տագնապը: Բանաստեղծական հոետորականության արժեքը ունի «հոգնած այս ամենից»-ը հակադրությունների սկզբում և վերջում հիշատակելը և մանավանդ վերջին ամփոփիչ տողը, որ բոլորովին նոր լույս է սփռում ողբերգության վրա, նոր կերպ իմաստավորում:

Եերսպիրի այս բանաստեղծությունը այն գործերից է, որոնց արտաքին պարզության, սովորականության սակ, մանավանդ շատ փոքր ծավալի մեջ մտքերի և զգացմունքների փոթորկվող օվկիանոս է «աեղավորված»:

Ահա հայ թարգմանիչը այդ նույն օվկիանոսը պետք է կարողանա «տեղավորել» միևնույն 14 տողը, միևնույն պարզությունը ու սովորականությունը ունեցող հայալեզու «կեզեի» մեջ՝ հայերեն դարձնելով հոետորական-բանաստեղծական հիշյալ հնարանքները, պահպանելով սովորական հանգերը:

* * *

Նախ տեսնենք ինչ արժեք ունի Հ. Հովհաննիսյանի թարգմանությունը: Ահա այն.

- 1 Քեզ եմ կանչում, ո՞վ մահ, քեզ եմ կանչում վաստակաբեկ,
- 2 Տանջվեցա տեսնելով պատիվը ոտնակոխ,
- 3 Արժանիքը՝ ցնցոտիներով, անմեղությունը պղծված,
- 4 Հավատարմությունը՝ մատնված, ճշմարտությունը՝ շղթայակապ,
- 5 Հիմարներ, որ պարծենում են իրենց դափնիներով,
- 6 Իմաստուններ, նշավակության առարկա և հալածված,
- 7 Երկնային հրաշալի ծիրքը՝ կուրքերի ծաղրին ենթարկված,
- 8 Տիմար զրպարտիչների շար հաղթանակը:
- 9 Եվ արվեստը՝ ահարեկ իշխանության բռնությունից,
- 10 Ամբարտավան ճակատը ողորմելի անմտության
- 11 Եվ ոսկու ույժը և կործանիչ կրքեր
- 12 Եվ թարիքը՝ գերի տիրագուխ Զարիքի ձեռքին:

Վերջին երկու տողը Հովհաննիսյանը չի թարգմանել այն պարզ պատճառով, որ նրանք որևէ կերպ չեն կարող օգնել (ավելի շուտ կվնասեն) իր թարգմանության նպատակին, այն է «Համելետին» նվիրված դասախոսության մեջ աշակերտներին ցույց տալ, որ 66-րդ սոնետը և Համելետի «Լինել թե լինելը», Հովհաննիսյանի խոսքով ասած, «միևնույն զգացմունքների և մտքերի արտահայտություն են, — մենախոսությունը սոնետի զարգացումն է նորա կատարելագործված մշակությունը»: Վեր-

շին երկասպը այս պնդումը կասկածի տակ պետք է տաներ, քանի որ, ինչ-պես տեսանք, հենց այդ երկասպն է ամենից ավելի տարրերում սոնեառ մենախոսությունից Ռուբեն Հովհաննիսյանը թարգմանել է սոնեափառը, որն իրոք մենախոսության մի հատվածի մեջ եղած «պարզմունքների և մտքերի» արտահայտությունն է:

Ինչ վերաբերում է թարգմանված 12 տողին, ապա դժվար չեն կատելու որ նրանցում շեղումը բնագրի ոգուց և ձևից շատ մեծ է, նախ հենց առաջին տողը շերսպիրյան չէ, ավելի ճիշտ շերսպիրյան տողի ցցուն, կեղծ բանաստեղծականացումն է «ո՞վ մահ» պաթետիկ կոչականը, «քեզ եմ կանչում»-ի վերաբրած կրիությունը ոչինչ չեն թողնում բնագրի-առաջին տողի հուսահատ, արտամ հանգարատությունից և ներքին հուսա-կանությունից, սխալ է զրված նաև վաստակաբեկ բառը, «Շոգնած այս ամենից»-ի (Tired with all these) խորունկ արտահայտության փոխարեն: Այսուհետեւ, կան շերսպիրյան տողերի հանապաշտություններ, որոնք, իհարկե, ինքնըստինքյան կարող են արդարացվել հաջող թարգմանու-թյան մեջ, բայց այս գեղքում նրանի ուղեկցվում են մտացածին, ոչ շերս-պիրյան մտքերով, հակադրություններով, բնդ որում տողերից մի բա-նիսր ամրողությամբ հնարված են: Այսպես, բնագրի 6-րդ տողը («Եվ կուսական առաքինությունը գաֆանորեն պղծված») և 2-րդ տողը («տես-նելով արժանավորությունը գարձած մուրացկան ի ծնեա») սեղմվել են մեկ 3-րդ տողում («Ամբանիքը ցնցուաիներով, անմեղությունը պղծված»), իսկ թարգմանության 2-րդ տողի հակադրությունը («պատիվը ունակոխ») և 6-րդ տողն ամրողությամբ («իմաստուններ, նշավակության առարկա և հալածված») փաստորեն բնագրի որևէ տողի կամ հատվածի արտահայ-տությունը չեն: Բնավ շերսպիրյան չեն նաև թարգմանության 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ և մահավանդ 11-րդ տողերը: Այսպես, բնագրի «Եվ ուկեզօծ պատիվը՝ տրվող անամոթարար» տողի դիմաց ունենք «Հիմար-ներ, որ պարծենում են իրենց զափինիներով», «Եվ ճշմարիտ կատարելու-թյունը անարդար վարձատրված»-ի դիմաց ունենք «Երկնալին հրաշալի ձիքը կույրերի ծաղրին ենթարկված» կամ՝ «Եվ ուժը կաղ իշխանությու-նից ճնշված»-ի դիմաց՝ «Տիմար զրպարտիչների շար հաղթանակը», «Եվ հիմարությունը իրեն խրատատու՝ իմաստությունը քննելիս», տողի դիմաց արված է՝ «Ամբարտավան հակատը ողորմելի անմտության», «Եվ պարզ ճշմարիտը բթամտություն անվանված» տողի դիմաց կարդում ենք «Եվ ոսկու ուշը և կործանիչ կրքեր»: Այսինքն՝ սա շերսպիրյան սոնեառի նույնիսկ աղատ փոխադրությունը չէ, այլ հնարված հակադրությունները էժանագին կերպով «սաստկացված» (ուկու ույժ, կործանիչ կրքեր և այլն):

արտաքին «բանաստեղծականությամբ» օճված մի նոր գործ է: Դեն են
նետված նաև շեքսպիրյան և-երը (11-ից 2-ն է մնացել), չկան հանգեր
և այլն:

Անսպասելի էր, որ Հ. Հովհաննիսյանի նման պատասխանատվության
մեծ զգացում ունեցող հմուտ թարգմանիչը այսպիս անփույթ վարվեր
շեքսպիրյան լավագույն սոնետներից մեկի հետ:

Հայտնի է, որ Հովհաննիսյանը անգլերեն չի իմացել կամ այնպես
չի իմացել, որ կարողանար բնագրից կատարել թարգմանությունը, ամե-
նից հավանականն է, որ թարգմանությունը կատարված լիներ ոռուե-
րենից: Պարզվեց, որ մեր բանաստեղծի ձեռքին եղել է ոռուերեն ամե-
նահաջող թարգմանություններից մեկը՝ Ֆ. Զերվինսկունը²⁷:

Ահա այդ թարգմանությունը.

Тебя, о смерть, тебя зову я, утомленный,
Устал я видеть честь низверженной во прах,
Заслугу—в рушище, невинность—оскверненной,
И верность—преданной, и истину—в цепях.

Глупцов, горлящихся лавровыми венками,
И обесславленных, опальных мудрецов,
И дивный дар небес, осмеянный слепцами,
И злое торжество пустых клеветников.

Искусство—робкое пред деспотизмом власти,
Безумья жалкого надменное чело,
И силу золота, и гибельные страсти,
И благо—пленником у властелина Зло.

Усталый, льнул бы я к блаженному покою,
Когда бы смертный час не разлучал с тобою.

Ինչպես պարզ կարելի է տեսնել, ոռուերեն այս թարգմանությունը
Հովհաննիսյանը թարգմանել է ճշգրտորեն, հնարավոր լավագույն ձեռվ,
միայն առանց հանգերի և բաց է թողել վերջին երկու առողք (որոնք, ի
դեպ, նույնպես Զերվինսկու կողմից ճիշտ չեն թարգմանված, ինչպես
ասվեց վերը, ըստ բնագրի՝ հոգնած բանաստեղծի համար մահը միայն
մի պատճառով չի ցանկալի, որ իր մահվան հետևանքով սիրելի անձը
աշխարհում կմնա մենակ, մինչդեռ ըստ այս թարգմանության իսանդարի-

ըր բաժանումն է, քնարական հերոսը չի ուղար բաժանվել ինչ-սր մեկից, այսինքն՝ նա նախ իր մասին է մտածում, իսկ բառ Շեքսպիրի մտահագությունը միայն սիրելի էակի մասին է):

Ուրիմն 66-րդի Հայերեն ազգափոխման հեղինակը բնավ Հովհաննիսյանը չէ, այլ ազգափոխված, «Հորինված» թարգմանությունը:

* * *

Այժմ քննենք Հ. Մատեհյանի թարգմանությունը.

- 1 Հոգնած սրբանցից՝ լավ է ինձ հայցել հանգուցիշ մահը,
- 2 Քան դիտել հավետ արժանիքն այսակազ մուրացիկ ծնված,
- 3 Աղքատ ոշինչը շքեղ պճնրված,
- 4 Ամենամարուր հավատարությունն իզուր զրծրված,
- 5 Ոսկեզօծ պատիվն անամոթարար անտեղի տրված,
- 6 Կուսական անրիծ առարինությունը բրտորեն պղծված,
- 7 Կատարելությունն անիրավորեն վարկարեկ արված,
- 8 Կազ վարչության տակ կորովն ուժաթափ,
- 9 Իշխանության տակ զիսության լեզուն կաշկանդած ու կապ,
- 10 Հիմարությունը վարդապետորեն իշխող հանճարին,
- 11 Պարզ ճշմարտությունն անարգված որպես պարզամտություն
- 12 Եվ գերի բարին ծառայող դարձած գերիշխող շարին,
- 13 Հոգնած սրբանցից, ա՞խ, հոգիս սրբանը թողներ ու կնօ՞ր,
- 14 Օթև մեռնելովս իմ սրտակիցը մենակ շըմնար:

Այսակեզ արդին մեր առջևն է իրոք շեքսպիրյան սոնետը, ճիշտ է, բնագրի անկրկնելի ներքին բնարական արժանիքները, նաև նրա մեղեդիական հանգային երանցը շատ քիչ են պահպանված այստեղ, բայց և այսպիս սա շեքսպիրյան գործի թարգմանությունն է, և, կարելի է ասել, Հիմնականում ճիշտ թարգմանությունն Մատեհյանը իրոք կարողացել է շեքսպիրյան սոնետը հասցնել հայ ընթերցողին կամ, ավելի ճիշտ, պազավար տալ այդ սոնետի մասին:

Գլա նաև բնագրային առղերի Հաջորդականության որեւէ խախտում, բնագրային որևէ հակադրության աղավաղում, ճիշտ են ընթերցված և թարգմանված նաև բնագրի 1-ին տողը և վերջին երկու տողերը «Հոգնած սրբանցից» ճիշտ է արտահայտում «Tired with all these»-ի միտքը, թեև ճշտագույնը չէ, ճիշտ է թարգմանված նաև «restful death»՝ «հանգուցիշ մահ» (թեև անդուրաբեր-ը գուցե ավելի ճիշտ է): Ամբողջ սոնետի, և հատկապես վերջին երկու տողերի, թարգմանությունը վկայում է, թե սրբան խորունկ է ընթերցել ու ըմբռնել թարգմանիշը 66-րդ:

սոնետը: Մի քանի գեպքում Մասեհյանը «բառացիությունից» հրաժարվելով ավելի հարազատ է արտահայտել բնագրային նրբերանգը: Օրինակ, 10-րդ տողը՝ «Եվ հիմարությունը իրու խրատառու հմտությանը (գիտելիքները) բննելիս» Մասեհյանը թարգմանել է. «Հիմարությունը վարդապետորեն իշխող հանձարին», որը բնագրում ասվածի հայերեն բարդական հաջող մի գրանորում է (գուցե թիւ հնացած է doctor-like-ը վարդապետորեն կարդալը):

Անշուշտ, շեքսափիրյան հակագրությունների և տրամադրության առաջել հարազատ դրսեորմանն օգնել է բնագրում եղած տների և հանդավորման համակարգով չկաշկանդվելլ (բնագրի Յ տների անձ հանգերի համակարգը բոլորովին խախտված է, անելը վերացված են և տրված է անկարգ հանգավորում՝ 1-ին տողը անհանդ, 2, Յ, 4, 5, 6, 7-րդ տողերը միևնույն ված հանգով և այլն, միայն վերջին երկու տողն է ըստ բնագրի հանգավորված՝ ըստ «չկաշկանդվելլ» նաև վնասել է գործին, կորել է բնագրին հատուկ մեղեդիական-դասական երանգը: Թարգմանության բանաստեղծական-հոկտորական կողմը տուժել է բնագրային աների գեղջումով (միայն 12-րդ տողում է Եվ-ը պահպանվել), այս ամենից բացի, 9-րդ տողում անհաջող է թարգմանվել առև բառը (նշանակում է արվեստ, ներշնչանք, գուցե բանաստեղծություն, բայց ոչ բնավ գիտություն, ինչպես զրել է Մասեհյանը):

Ամեն գեպքում 66-րդ սոնետի այս թարգմանությունը իր թերություններով հանդերձ սետք է հիմնականում հաջողված համարել, այն այժմ էլ կարող է հանձնարարվել ընթերցողին, մանավանդ, որ համապատասխան է հայ բանաստեղծական լեզվի մշակույթի այսօրվա օրինակելի մակարդակին և դնուս մնում է չգերազանցված:

* * *

Քննենք Խ. Դաշտենցի թարգմանությունը:

- 1 Մահվան անդորրն եմ տենչում այս ամենից ևս հոգնած,
- 2 Երբ տեսնում եմ արժանին՝ թշվառության մեջ ծընված,
- 3 Եվ գունելի ոչնչին՝ մետաքսներում զարդարված,
- 4 Եվ լուսեղեն՝ հավատը՝ նենգորեն գետնահարված,
- 5 Եվ պատիվը ուսկեզօծ անպատիվ մարդուն տըրված,
- 6 Եվ անբիծ առաքինին՝ վայրենաբար պըղծըված
- 7 Եվ կատարյալը վեհմ անիրավ վարկաբեկված,
- 8 Եվ ուժը կաղ վարչությամբ՝ զորությունից զըրկըված,
- 9 Եվ արվեստը բռնությամբ՝ լեզվակապ ու լրէկըված,

- 10 Եվ ապաշը հանց գիտում՝ վերակացու հանճարին,
 11 Եվ ճշմարիտ անսորդ՝ տիմարություն հորջորջված,
 12 Եվ իշխան շարի առաջ՝ ծնկաշոր բարուկ բարին
 13 Այս ամենից ևս հոգնած մահվան անդորրն եմ տենչում,
 14 Բայց, սե՞ր, ինչպէ՞ս քեզ լրիմ, ա՞յս, այդ ցավն է, ինձ տանշում:

Ըստ երեսյիին, այս թարգմանության առաջին և նախավերջին շատ կարևոր տողերը ավելի լավ են արտահայտում բնապրի տրամադրությունը, քան նույնիսկ Մասեհյանի թարգմանությունը: Կան այստեղ նաև այլ հաջող լուծումներ, օրինակ, 9-րդ տողը «And art made tongue-tied by authority» (Եվ արվեստը լոելու գոտապարաված իշխանության (բոռնության) կողմից) դիմուկ է թարգմանված «Եվ արվեստը բանությամբ՝ լեզվակաս ու լըլիկած» կամ «And simple truth miscall'd simplicity» (Եվ պարզ ճշմարիտը բիտամտություն (անժառություն) անվանված) տողը վատ չի հնչում՝ «Եվ ճշմարիտն անսորդ տիմարություն հորջորջված» ձևով:

Աւշագրություն է զրավում նաև, որ անդերենի behavior (տեսնել կամ տեսնելով) գերբայական ձեր, որ ինչպես տեսանք, կենարոնական գեր ունի սոնեափ շարահյուսության մեջ, և Գաշտենցը փոխարինել է Հայերեն գիմավոր ձեռվ՝ տեսնում եմ: Ըստ երեսյիին, հայերենում ավելի հարազատ է հնչում «Երբ տեսնում եմ արժանին՝ թշվառության մեջ ծրնված» խոսքը, քան իմե զրծածվեր անորոշ գերբայի տեսնել կամ տեսնելով ձեր (Հ. Մասեհյանը օգտագործել է դիտել գերբայը):

Այսուհետեւ, ճիշտ է վարվել թարգմանիչը պահպանելով Շերսպիրի բոլոր 11 Եվ-երր:

Այս ամենի հետ միասին չի կարելի չնկատել թարգմանության որոշ վիճելի կողմերը: Այսպես, մի քանի գեպրում նկատում ենք շեղում բնապրի բարնարության սկզբանքից և որոշ բմբոնումների շպատառաբանված խոտացում կամ բնդդում: Այսպես, «And needy nothing trimm'd in jollily» (Եվ գտատարկ ոչնչությունը խինդի մեջ բարգավաճելիս կամ գըտնըրվելիս) թարգմանված է «Եվ զունելի ոչնչին մետաքսներում զարդարված», ուր ավելորդ է զունելի մականվամբ «ոչինչ»-ը սաստկացնելը, անհաջող է նաև «մետաքսներում զարդարված»-ը, որ նկատելի շեղում է բնապրի բովանդակությունից: Զի կարելի համաձայնել նաև հաշորդ տողի թարգմանության հետ՝ «Եվ լուսեղեն հալատը՝ նենդորեն գետնահարված»: Բնագրում խոսքը վերաբերում է ամենամաքուր հավատը կամ հավատարմությունը (purest faith) տարաբախտորեն կամ անտեղի կերպով

(unhappily) խարելուն, դրժելուն (forsworn), մինչդեռ թարգմանության «նենգորեն գետնահարված»-ը շի արտահայտում շեքսպիրյան մտքի ու զգացմունքի նրբերանգը: Բնագրի 7-րդ տողն ասում է այն մասին, որ ճշմարիտ կատարելությունը (right perfection) շի գնահատված, անարդար է վարձատրված (wrongfully disgraced), մինչդեռ թարգմանության մեջ այն դարձել է «Եվ կատարյալը վսեմ՝ անիրավ վարկարեկված» (բնագրում վարկաբեկման մասին խոսք չկա): Արդյոք ավելորդ չէ՝ նաև վերջին տողի «Ա՛խ»-ը, որ հազիվ թե բնագրի տրամադրության հաջող վերաբտադրություն լինի: Բացի դրանից վերջին տողում «Բայց, սե՞ր, ինչպե՞ս քեզ լքեմ»-ը այնքան էլ հստակ չի վերաբտադրում բնագրի «Save that... I leave my love alone» (Եթե... Մողնեի իմ սերը միայնակ, կամ եթե... ստիպված լինեի սիրելիին թողնել միայնակ) իմաստը, որովհետև «ինչպես լքեմ»-ը կարող է նշանակել նաև «Ես չեմ ուզում քեզնից բաժանվել, քանի որ ինձ համար լավ է քեզ հետ լինել», մինչդեռ բնագրի իմաստն է «ինչպե՞ս պետք է մնաս (այս վատ աշխարհում) առանց ինձ, միայնակ»:

Ինչ վերաբերում է բնագրի հանգային համակարգին, ապա, ինչպես տեսնում ենք, այս թարգմանության մեջ ևս պահպանված չէ:

Ի՞նչպիսի թարգմանությունը պետք է գնահատել ոչ միայն հատված առ հատված, այլև ամբողջությամբ: Այդպիսի մոտեցման դեպքում էլ, խ. Գաշտենցի թարգմանությունը հիմնականում հաջողված պետք է համարել, այն, ինչ խոսք, մի շարք տեսակետներից լրացնում է սոնետի մասեհյանական ընթերցումն ու թարգմանությունը:

* * *

Դավիթ Դավթյանի և Հովհաննես Քելեշյանի թարգմանության մասին ուղղակի կարելի է ասել՝ նախորդ երկու թարգմանությունների վրա ուժին չի ավելացնում, իսկ որոշ դեպքերում քայլ է դեպի ետ:

Այս այդ թարգմանությունը:

- 1 Կանչում եմ մա՞ս ու անդորր: Անտանելի է տեսնել
- 2 Արժանավոր էակին որպես թափառ մուրացկան,
- 3 Ոչնչությունը նանիր, որ պերճանքով է զուգվել,
- 4 Եվ լրացրեն ուրացված խոստումները սրբազան,
- 5 Եվ ուկեփայլ պատիվը անարժանին զուր արված,
- 6 Եվ ցավագին կոպտությամբ կուտությունը պղծըված,
- 7 Եվ կատարյալ պարկեշտին՝ ամոթանքով զրպարտված,
- 8 Եվ հանճարին՝ կաղացող բռնությունից խեղճացած,

- 9 Եվ մաքերը ու լիզոն շղթայակասդ արվեստին,
 10 Եվ պարզամիա ճշմարտին՝ հանիբավի խենթ կոչվող,
 11 Եվ գիտունի դիմակով կառավարող արգեախն,
 12 Եվ Հնագանդ սարտելին՝ շարիքներին ծառայող:
 13 Այս բոլորից հոգնատանց, ևս ուզում եմ փախչել Հար,
 14 Բայց ցավում եմ քեզ թաղենել միայնակ ու վշարանը:
- Նշենք նաև, որ այս թարգմանության մեջ էլ բնագրի տաղերի հերթականությունը հիմնականում պահպանված է (բացի մի դեպքից՝ բնագրի 11-րդ տողը դարձել է 10-րդ և Հակասակը): Պահպանված են բնագրային 11 եվերից 9-րդ թնագրի հանդավորման համակարգը այսուղ նույնպես լիովին խախտված է: Այս հատկանիշները, հասկանալի են, որ դեռևս բիշ բան են ասում թարգմանության արժեքավոր կամ անարժեք լինելու մասին:

Թարգմանությանը մեծապես վնասում է բնագրի ոչ անհրաժեշտ չափով խորունկ բնթերցումբ: Օրինակ, ասածին տողի ամբողջ կարելոր
Tired with all these—*p* (այս ամենից նոգնած—*p*), որ կրկնվում է նախավիրցին տողում և կարելոր գեր ունի սոնեասում (ամբազացնում է բանատակածության արամադրությունը ու կառուցվածքը), այս թարգմանության մեջ տրված է միայն նախավիրցին տողում (տաշչինում չկա): Ալդպիտով, թարգմանված սոնեափ սկիզբն արգեն շերսպիրյան չէ, չկա հենց սկիզբից շեշտավող հուսահատ հոգնածությանը և նրա պատճառ բազմանշանակալից «այս ամենից»—*p*: Դրա ուշը տողում բռնել է բնագրի 2-րդ տողի սկիզբը, բայց ձևափոխված՝ «Անտառելիքի է տեսնելը» (բնադրում առսկ տեսնել), այս անտառելիք-ն արտաքուստ է միայն ուժեղացնում «անենելք»-ու տառապանքը, իրականում կարծիս մի փոքր էժանացնում և թուլացնում է արամադրության արտահոյտումը: Հատակ չէ թարգմանության 2-րդ տողը, որը «արժանավորությունը» (desert) դարձել է արժանավոր էակ և բնավճիշտ չէ «ի ծնե մուրացիան»—*p*՝ «թափառ մուրացկան» դարձնելու:

4-րդ տողը բոլորովին անձանաշելի է դարձել՝ «Եվ լրրոբեն ուրացված խոսառուները սրբազմն», բնագրում, ինչպես վերն ասվեց, խոսր սոսկ այն մասին է, որ անձնամարտը հավատը անտեղի կամ տարախատարք խարված է, ուրիշն հնարվուծ են և «լրրոբեն»—*p*, և՝ «խոսառուներ»—*p*, և՝ «սրբազմնը»:

7-րդ տողում էլ «Ճշմարիտ կատարյալ»—*p* դարձել է «կատարյալ պարկեցա», «անարգար վարձատրիւթ»—*n* էլ՝ «ամոթաներով զրպարտված»—*p*

Թարգմանության 8-րդ տողում հայտնվել է ինչ-որ «Հանճար», թեև բնագրում խոսքը «ուժ»-ի մասին է:

Բնագրի 10-րդ տողի „And folly (doctor-like) controlling skill“-ը (Եվ հիմարությունը իբրև խրատատու հմտությունը (կամ զիտելիքները) քննելիս) դարձել է. «Եվ զիտունի դիմակով կառավարող տգետին», որը հատկապես անձիշտ է կառավարող-ը:

Բնագրի 12-րդ շատ կարևոր տողը լիովին աղավաղված է: «And captive good attending captain ill»-ը (Եվ ստրկացված բարին՝ հաղթանակած շարին ծառայելիս), — դժվար չէ նկատել, որ այստեղ կենարունում է բարին, լավը, որը ստրուկ է հազթող շարի մոտ, մինչդեռ թարգմանության մեջ բարին՝ բռուրովին վտարված է և ասպարեզ է բերված սոցիալական հարց՝ «Եվ հնազանդ ստրուկին՝ շարիքներին ծառայող», որը չկա Շեքսպիրի սոնետում:

Այս թարգմանությունը լեզվական տեսակետից նույնպես խոցելի է, օրինակ, 9-րդ տողը թենի բնագրի միտքը այսպես թե այնպես արտահայտում է, բայց անհաջող է լեզվական տեսակետից՝ «Եվ մտքերը և լիզուն շղթայակապ արվեստին», — որը «արվեստին»-ը ոչ թե մտքերի և լիզունի հատկացուցիչ է ընկալվում (հատկացուցիչը արևելահայերենում ն հոդ չի ունենում), այլ իբրև հանգման խնդիր, որով և իմաստ չի ստացվում, եւ շհաշված, որ նույնիսկ եթե քերականորեն նիշտ էլ դրվեր՝ «արվեստի մտքեր և լիզու», ապա միևնույն է թարգմանությունը մերժելի կիններ (բնագրում սարվեստի մտքերը կասկածելի ըմբռնումը չկա):

Անիմաստ է նաև վերջին տողի վշահար-ը, որ արտաքնապես է միայն շեշտում «միայնակ թողնելա-ը», իրականում թուլացնում է այն, և իզուր չէ Շեղինական այդ մասին առել պարզ ու սովորական, բայց, անշուշտ, ներքին ուժով:

Թարգմանությունն ամբողջությամբ հնչում է անհրապուր, ոչ բանաստեղծական: Այսպիսի թարգմանությունը կարող է նաև թյուրիմացության մեջ դցել ընթերցողին բնագրի արժանիքների վերաբերյալ:

* * *

Շեքսպիրյան այս սոնետի ուշադրավ ընթերցում և թարգմանությունը է սփյուռքահայ բանաստեղծ Հակոբ Անտոնյանինը:

1 Այս բոլորեն ես հոգնած՝ կըդամ մահվան հանգիստին,—

2 Արժանիքի տեր անձ մը՝ տեսնել ծընած մուրացկան

3 Կամ ճոխ, զվարթ կյանքի մեջ՝ ոչնչություն մանարժան,

- 4 Կամ մեկը, որ կրիսարե հավատացող, պարզ հոգին,
- 5 Կամ պատիվը սակեզօծ՝ սխալ տիրոջ ընծայված,
- 6 Կամ կույսն անրիծ՝ զոր բռնի վերածած են պոռնիկի,
- 7 Կամ անարդար կոխոտումն իրավունքին անթերի,
- 8 Կամ ուժը, որ շարաշար զործածությամբ կիշնե ցած,
- 9 Կամ արվեստը՝ իշխողին դատապարաված համբության,
- 10 Կամ խենթը, որ վարիչ է, իմաստության հովերավ,
- 11 Կամ ճշմարիսն ակներին՝ կոչված պարզուկ միարի մով,
- 12 Եվ կամ գերին վեհողի՝ հիվանդ տիրոշն իր պաշտպան,
- 13 Եյս բոլորին ևս հոգնած՝ կուզեմ հրաժեշտ տալ կյանքին,
- 14 Բայց թե մեռնիմ, սիրելիս պիտի մնա առանձին:

Այս գեղքում ևս բնագրի բոլոր տողերի հերթականությունը պահպանված է, հանգամանք, որ զայց այնքան էլ կարեոր չէ, սակայն ինչպես պարզվում է բնորոշ է շերսպիրյան սոնեափ հայերին թարգմանությունների համար: Նշենք, որ այլ լեզուներով կատարված թարգմանությունների մեջ այդ հերթականությունը շատ հաճախ է խախտվում, օրինակ, ուստերեն ամենալավ դիտված թարգմանություններում անդաւը (Պատուերնակ, Մարշակ, Ռումեր) տողերի բնագրային հերթականությունը խախտված է²³:

Անտոնյանի թարգմանության մեջ դիտվում են նախորդների համեմատ որոշ նորություններ: Օրինակ, սա առաջին հայերեն թարգմանությունն է, որ հանգերի համակարգը, թեև բնագրինը չէ, բայց ավելի մոտ է բնագրին, քան նախորդ բոլոր թարգմանություններում: Բնագրի բառատողերում եղած հանգերի աՅ աՅ համակարգը այստեղ փոխարինված է աՅ համակարգով, որը նույնպես հատուկ է անգիտական դասական սոսնեափին:

Նորությունն է նաև, որ շերսպիրյան 11 առջերը այս գեղքում պահպանվել են այլ ձևով, նրանցից 10-ը թարգմանվել է կամ, մեկը՝ Եվ կամ: Պետք է ասել, որ այս գեղքում հայերեն կամ-երը վատ չեն հնչում անդյերեն առջերի փոխարեն, և բնագրի հոկտորական հնարանը նկատելիորեն պահպանված է:

Բայց, իհարկե, այս թարգմանության ամենակարեոր արժանիքը այլ է՝ շերսպիրյան արամագրության, խոհի ու զգացմունքի համեմատաբար ավելի ճիշտ արտացոլումը, թեև հասկանալի է, որ այստեղ էլ կան խո-

ցելի կետեր, օրինակ, չի կարելի համաձայնել բնագրի 7-րդ տողի ընթերցման և թարգմանության հետ՝ «Կամ անարդար կոխտում իրավունքին անթերի», ինչպես արդեն զիտենք բնագրի 7-րդ տողում խոսրվ վերաբերում է ոչ թե անթերի իրավունքի անարդար խախտմանը, այլ ճշշմարիտ կատարելությունը շգնահատվելուն։ Անհաջող են նաև 8-րդ, 10-րդ և 12-րդ տողերը, որոնք թե այս կամ այն շափով բնագրից հեռացած են և թե ավելի թույլ են հնչում։ Սակայն թարգմանության հաջողված հատվածները, որոնք ավելի շատ են, պահպանում են ամբողջ սոնետի ընդհանուր բանաստեղծական հնակղությունը։ Շատ կարևոր է, որ լավ են թարգմանված առաջին տողը («Այս բոլորն ես հոգնած կըդամ մահվան հանգիստին») և վերջին երկու տողերը («Այս բոլորն ես հոգնած՝ կուզեմ հրաժեշտ տալ կյանքին, թայց թե մեռնիմ, սիրելիս պիտի մնա առանձին»), հայերեն հաջող են արտահայտված նաև բնագրի 2—6-րդ տողերում եղած հակադրությունները և արամագրությունները։ Այս դեպքում թարգմանությանը կարծեն չի վնասում այն, որ բնագրի ընդհանուր, շանձնավորված որոշ հակադրություններ այստեղ անձնավորված են. օրինակ, բնագրի 2-րդ տողի տեսնել կամ տեսնելով արծանավորությունը ի ծնել մուրացկան միտքը թարգմանված է «Արժանիքի տեր անձ մը տեսնել ծընած մուրացկան» և այսպես հայերեն, ըստ երևույթին, ավելի լավ է հնչում և բնագրային իմաստն էլ թեև այլ ձևով, թայց պահպանվում է։

5-րդ տողում մի այլ կարգի կոնկրետություն է մտցված բնագրի համեմատ։ „And gilded honour shamefully misplaced“ տողում ասվում է, որ ոսկեղոծ պատիվը տրվում է անամոթաբար, անզերեն խոսքից ենթադրվում է, որ այն տրվում է անարժան մարդուն, թեև այդ կոնկրետությունը չկա։ Մասեհյանը հարազատ է մնացել բնագրի խոսքին՝ «Ոսկեղոծ պատիվն անամոթաբար անտեղի տրված», և. Դաշտենցը, կոնկրետությունն է մտցրել՝ «Եվ պատիվը ոսկեղոծ՝ անպատիվ մարդուն տրված», որ վատ չէ հնչում, նույնկերպ են վարվել Գ. Դավթյանն ու Հ. Քելեշյանը՝ «Եվ ոսկեփայլ պատիվը անարժանին զուր տրված» (և սա այս թարգմանության, թերևս, ամենահաջող տողն է), այս ուղիով է պնացել նաև Հ. Անտոնյանը՝ «Կամ պատիվը ոսկեղոծ սխալ տիրոշ ընծայված», որը և չի կարելի ասել, թե անհաջող է։

Ուշադրություն է գրավում 11-րդ տողի թարգմանությունը «Կամ ճշշմարիտն ակներև՝ կոշված պարզով միտքի սով»։ Սա, ըստ երևույթին նախորդ բոլոր թարգմանություններից ավելի ճիշտ է (թեև ոչ բացար-

Ճակուրին ճիշտ) արտահայտում այն, ինչ ցանկացել է Շեքսպիրն առել „And simple truth miscalled simplicity“ առղով, թեև ալս «բառացի» թարգմանաթիւնը չէ:

* * *

Այժմ բերենք Թումանյանի արխիվում եղած թարգմանությունը:

- 1 Խոնջած այս բոլորից ես անդորրացուցիչ մահվան իմ աղաղակում
- 2 Ինչպես մի ի ծնե մուրացկան, զատապարախած տեսնելու անտուառ (անապատը զիտելու)
- 3 Կարիքավորից, և որը սակայն ոչ մի ուրախությունից չզրկում ինքն իրան,
- 4 Ամենամարտուր հայատը ապիրչանկորին դավաճանված
- 5 Եվ ոսկեզօյալ պատիվը ամոթապարառեն անարժանին արված
- 6 Եվ կուսական առարինությունը կոպարեն բազացրած
- 7 Եվ իսկական (արդար) կատարելությունը անարդարորեն նախատված
- 8 Եվ զարությունը կազացող ամբոխից անկարող դարձած
- 9 Եվ արվեստը բերանակատ արված հեղինակությունից
- 10 Եվ զժությունը (ինչպես վարդապետ) որ վերհսկողության է ենթարկում ճարտարամտությունը
- 11 Եվ պարզ ճշմարտությունը անօրինաբար պարզամտություն է անվանում
- 12 Եվ գերված որ իրը ծառա սպասավորում է գերող շարության
- 13 Հոգնած այս բոլորից ես կբողնի ու կհեռանայի այս բոլորից
- 14 Եթե մենաերավ չհարկադրվեի մենակ թողնել իմ սիրտը:

Ինչպես զժվար չեն կատել, թարգմանությունը տողացի է: Արխիվում կա այս կերպ թարգմանված նաև ուրիշ 3 ստուտ, բոլորն էլ գրված բանաստեղծի զատեր՝ նվարդի ձեռքով²⁹: Հարց է առաջանում ի՞նչ լիդվիցից է կատարված այս թարգմանությունը:

Հայտնի է, որ Հ. Թումանյանը անդերեն չի իմացել և հասկանալի է, որ նա ինքնուրուցն չէր կարող թարգմանություն կատարել անգլերենից, այն էլ շեքսպիրյան անգլերենից: Կարելի էր սպասել, որ այս թարգմանությունն ըստ իր սովորության Թումանյանը կատարած լիներ ուռսերենից: Եվ մենք այս տողացին համեմատեցինք ուռսերեն բոլոր այն թարգմանությունների հետ, որոնք կարող էին լինել Թումանյանի տրամադրության առակ և որոնք կարողացանք գտնել: Պարզ դարձավ, որ հա-

յերեն այս տողացին դրանցից որևէ մեկի թարգմանությունը չէ, ավելին, յիովին ապացուցվեց, որ թարգմանությունը անգլերեն բնագրից է կատարվել և այն էլ սխալներով, որ հետեւանք է XVI—XVII դարերի անգլերենը լավ չիմանալու: Որ տողացին բնագրից է թարգմանված երեսմ է թեկուզ այն բանից, որ յուրաքանչյուր տող բառ առ բառ թարգմանված է (նույնիսկ 10-րդ տողի փակագիծը պահպանված է, որ թարգմանիշները սովորաբար չեն անում), թեև մի շարք բառեր հասկացված են սխալ, բայց այդ սխալների պատճառն էլ կամ անգլերեն համապատասխան բառերի բազմիմաստությունն է ու նրանց մասնավոր իմաստը չհասկանալը, կամ էլ բնագրի բառը անգլերեն մի այլ բառի հետ շփոթելը (որ լեզուն իմանալու, բայց շեքսպիրյան անգլերենը լավ չհասկանալու հետեւանք է):

Այսպես, երկրորդ տողի desert բառը թարգմանիշը հասկացել է անապատ, իսկ behold-ն էլ ձիշտ թարգմանելով ստացել է «տեսնելու անապատը»: Սա պատճառ է դարձել, որ տողի ամբողջ իմաստը սխալ հասկացվի, որի հետևանքով էլ սկզբի AS-ը թարգմանել է ինչպես, և տողը փոխանակ կարդալու «Տեսնելով արժանավորությունը մուրացկան ի ծնե» կարդացել է «Ճնշպես մի ի ծնե մուրացկան դատապարտված տեսնելու անապատը (անապատը դիտելու)»:

Բանն այն է, որ desert, իրոք, անգլերեն նշանակում է անապատ, նաև անապատային, անմարդաբնակ և ալլն: Սակայն կա նաև այլ desert, որ նշանակում է ծառայություն, նաև արժանիք, արժանավորություն: Այս վերջին իմաստներով (արժանիք, արժանավորություն), բայց երեւութիւն բառը այժմ ավելի քիչ է գործածվում, մինչդեռ շեքսպիրյան տողում ակներևարար այդ իմաստով է գործածված:

Հենց միայն այս փաստը խոսում է այն մասին, որ թարգմանությունը կատարված է անգլերենից, իսկ սա էլ նշանակում է, որ թարգմանիշը թումանյանը չի եղել: Դուցե և անգլերենից նախապես տողացի թարգմանել են ոռուերեն, իսկ սրանից էլ Թումանյանը թարգմանել է հայերեն, որ քիչ հավանական է:

Նույն կերպ ձիշտ չի ընթերցվել 3-րդ տողը՝ needy բառը սխալմամբ կարիքավոր հասկացվելու պատճառով. need իրոք արդի անգլերենում նշանակում է կարիք, աղքատություն, բայց սոնեալի needy-ն նշանակում է փուչ, սին: Այս կարգի անճշտություններ կան նաև 7-րդ, 8-րդ տողերում:

Այսպիսով, Թումանյանին վերագրվող այս տողացի թարգմանությունը, իրականում այլ անձնավորություն է կատարել, հավանաբար բանաստեղծի բարեկամ Մխիթար Տեր-Անդրեասյանը, որը անգլերենի ուսու-

ցիշ կը և թումանյանի խորհրդատուն անդիքսնի հետ առնչվող հարցերում (Տեր-Անդրեասյանն է Համեմատակել թումանյանի դիակոպիթյունները, արված «Համբետի» Հ. Մասեհյանի կատարած թարգմանության առթիվ)³⁵: Բայտ երկույթին, բանաստեղծի խնդրանքով նրա բարեկամը կատարել է այս տողացի թարգմանությունները, որպեսզի հետագայում թումանյանը օգտագործի դրանք իր կատարելիք թարգմանությունների մեջ:

* * *

Եկապիքի 66-րդ սոնետի հայերեն թարգմանությունների բննությունը, այսպիսով, ցուց է տալիս, որ դեռևս չկա հայերենի հնարավորությունների լիակատար օգտագործմամբ կատարված թարգմանություն։ Համեմատաբար ամենահաջողը, թերեւ մնում է, Հ. Մասեհյանի կատարածը, թեև որոշ կողմներով հաջող պետք է Համարել նաև և. Դաշտենցիք և Հ. Անառնյանի թարգմանությունները, բայց և ոչ մեկը չունի թարգմանական այն արվեստը, որը մենք տեսնում ենք շեքսպիրյան երկերի հայերեն այլ թարգմանությունների մեջ։

Խրախուսելի պետք է համարել բնարական այս հրաշալի ստեղծագործության առաջիկա հնարավոր թարգմանությունները, որոնց մեջ գույն և կատեղծվի շեքսպիրյան բնագրին արժանի գործ։

Ա Ա Ն Ո Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Ր

1. М. Морозов, Избранные статьи и переводы, М., 1954, № 281, նաև նույն հեղինակի վերջանքը՝ «Сонеты Шекспира в переводах С. Маршака» դրույթ, М., 1964, № 199.
2. Խոսքը վերաբերում է անդիքական սոնետին, իտալականը, որ անդիքական սոնետի նախատիպն է եղել, փորբ-ինչ այլ կատացվածք ունի՝ երկու քառատող և երկու եռատող՝ Կամ ուժազանի և վեցտողանի երկու տուն։
3. А. Аникст, Творчество Шекспира, М., 1963, № 320—324.
4. М. Морозов, Избранные статьи и переводы, № 279.
5. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, Համ. 3, Երևան, 1965, № 475.
6. Բնագրում՝ of time, այսինքն՝ ժամանակի:
7. Բնագրում՝ scorns, որ այստեղ ավելի շուտ պետք է նշանակի ծաղր, ծաղրանք:
8. Բնագրում՝ For who would bear...
9. ԱՇԱ ԲՆԱԳՐԻ ԱՐԴ ԺԱՍՏ
The oppressor's wrong, the proud man's contumely,
The pangs of despis'd love, the low's delay,
The patient merit of the unworthy takes...

10. *Բնագրում՝* Or to take arms against a sea of troubles.
11. *Բնագրում՝* When he himself might his quietus make
With a bare bodkin?
12. A. C. Bradley, Shakespearean Tragedy, London, 1962, էջ 61—62;
13. *Տե՛ս նույն տեղում:*
14. А. Аникст, Творчество Шекспира, էջ 373;
15. M. Seymour-Smith, Shakespeare's Sonnets. Edited With an Introduction and Commentary by Martin Seymour Smith, London, 1963, էջ 49;
16. *Նույն տեղում:*
17. *Տե՛ս* М. Морозов, Избранные статьи и переводы, էջ 277;
18. А. Аникст, Творчество Шекспира, էջ 311;
19. *Հմամական մասնակից աշխատավորվող թարգմանությունների ձեռագիրը*. М. Seymour-Smith, Shakespeare's Sonnets, էջ 3—12;
20. *Հմամական մասնակից աշխատավորվող թարգմանությունների ձեռագիրը*. А. Аникст, Творчество Шекспира, էջ 328;
21. *Նույն տեղում*, էջ 319;
22. М. Морозов, Избранные статьи и переводы, էջ 283;
23. „Мастерство перевода“, М., 1968, էջ 161—162;
24. *Նույն տեղում*, էջ 183—188;
25. *Տե՛ս Հ. Հովհաննիսյանի նշալ. Հատորում եղած ծանոթագրությունը*, էջ 578—579;
26. 29, 66, 110, 111 սոնետների Հ. Թումանյանին վերաբրվող թարգմանությունների ձեռագրերը (Ն. Թումանյանի արտագրությամբ): *Տե՛ս ԳԱԹ, Հ. Թումանյանի արխիվ, թղթ. № 174:*
27. *Տե՛ս В. Шекспир, Собрание сочинений, т. 5, СПб, Брокгауз-Ефрон, 1904, էջ 418:*
28. *Տե՛ս „Мастерство перевода“, էջ 167—168:*
29. Վ. Թերզիացյանը գրում է. «Ինքը Թումանյանը յտադրվել էր թարգմանել Շեքսպիրի սոնետները: Նրա թղթերի մեջ մնացել է մոտ երեսուն սոնետի բովանդակության կոնսպեկտը և թարգմանության փորձը» (Վ. Թերզիրացյան, 1956, էջ 103): Անհասկանալի է, թե ինչ նկատի ունի Թերզիացյանը «յտադրվել էր թարգմանել», «բովանդակության կոնսպեկտ և թարգմանության փորձ» գրելով: Արդյո՞ք նկատի են առնված հինգ սոնետների նաև վերոհիշյալ տողացի թարգմանությունները:
30. *Տե՛ս Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 6, Երևան, 1959, էջ 126:*